# ՀԱՅԵԼՈՒ ԿՊՉՈՒՆ ԺԱՊԱՎԵՆ







## Պոլիէթիլենային հիմքով և կիրլատային սոսնձանյութով երկկողմանի կպչող ժապավեն

### Հիանալի համատեղելիություն բոլոր հայտնի մակերեսների հետ

Այս ժապավենը կպչում է ամենատարբեր մակերեսներին, ինչպես օր.՝ փայտ, մետաղ, ապակի, քար, պլեքսիգլաս (օրգանական ապակի), մակրոլոն (չի ճաքճքում):

### Ուժեղ սկզբնական կպչունություն

Անմիջապես մոնտաժումից հետո երաշխավորված է բավականաչափ սկզբնական ամրություն

### Դիմացկուն է խոնավության և UV-օառագայթների նկատմամբ

Կպչող ժապավենը կարելի է օգտագործել ինչպես շինության ներսում, այնպես էլ դուրսը

### Բացառիկ հարելիություն

Ժապավենը շատ կիպ է նստում նույնիսկ անհարթ մակերեսներին (այնուամենայնիվ անհարթությունը չպետք է լինի կպչող ժապավենից ավելի հաստ):

### Բարձր մաշակայունություն

Տեխնիկապես ճիշտ օգտագործման պարագայում ժապավենը չի կորցնում իր էլաստիկությունը

| Արտիկուլ | 0894 918 | 0894 918 0 | 0894 919 |
|---|---|---|---|
| Փ./հատ | 1 | 1 | 1 |
| Սոսնձանյութի հիմքը | Ակրիլատ | Ակրիլատ | Ակրիլատ |
| Կրող հիմք | Պոլիէթիլ. փրփուր | Պոլիէթիլ. փրփուր | Պոլիէթիլ. փրփուր |
| Գույնը | Սպիտակ | Սպիտակ | Սև |
| Հաստությունը | 1 մմ | 1 մմ | 1,6 մմ |
| Լայնությունը | 25 մմ | 19 մմ | 12 մմ |
| Երկարությունը | 25 մ | 25 մ | 25 մ |
| Մին./մաքս. ջերմակայու-նությունը | -40-ից մինչև 95 °C | -40-ից մինչև 95 °C | -40-ից մինչև 95 °C |
| Պիտանելությունը՝ արտադրման օրվանից | 24 ամիս | 24 ամիս | 24 ամիս |

### Կիրառումը

Կպչող ժապավենը կարելի է օգտագործել ինչպես շինության ներսում, այնպես էլ դուրսը
Հայելիների տեղադրում/մոնտաժում, լուսամուտի փեղկի խորակների ամրացում, լոգարանում, սանհանգույցում մոնտաժումներ, կեռիկների, հենարանների, սնեռակների ամրացում

### Ցուցում

- Մակերեսները պետք է լինեն չոր, փոշեզերծված, յուղից և սիլիկոնից մաքուր:
- Որպեսզի ժապավենը ամուր, անթերի կպչի մակերեսին, այն պետք է բավականաչափ սեղմել հիմքին
- Օպտիմալ, վերջնական ամրություն՝ 24 ժամ անց
- Զգայուն (օր.՝ PP, PP, ռետին) և կոշտ կամ ծակոտկեն (օր.՝ փայտ, քար) մակերեսների վրա կիրառելիս խորհուրդ ենք տալիս սեփական փորձերը
- Պլաստիկացնող հավելանյութեր/փափկիչներ պարունակող պլաստմասսաները կպցնելիս պետք է հաշվի առնել, որ փափկիչները կարող են բացասաբար ազդել սոսնձանյութի հատկությունների վրա
- Անվտանգ հայելիները (հակառակ կողմը պատված է կապույտ կամ կանաչ թաղանթով) մոնտաժելիս խորհուրդ է տրվում լրացուցիչ կիրառել մեխանիկական ամրացման տարբերակը

### Ուշադրություն դարձնել մոնտաժման ցուցումներին:

Օգտագործման հրահանգները խորհուրդներ են՝ հիմնված մեր կողմից արված թեստերի և մեր փորձի վրա: Յուրաքանչյուր օգտագործումից առաջ անհրաժեշտ է փորձել, ինքնուրույն կատարել սեփական փորձերը: Կիրառման ոլորտի բազմազանության, ինչպես նաև պահպանման և վերամշակման պայմաններով պայմանավորված՝ մենք պատասխանատվություն չենք կրում վերամշակման որոշակի արդյունքի համար: Մեր տեխնիկական սպասարկման անվճար ծառայությունը ապահովում է տեխնիկական ինֆորմացիայով կամ հանդես է գալիս որպես խորհրդատվական ծառայություն: Այն չի կրում իր վրա պատասխանատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ մեր կողմից տրամադրված խորհրդատվությունը կամ ինֆորմացիան գտնվում են մեր պայմանագրով համաձայնեցված կետերի շրջանակներում: Մենք երաշխավորում ենք մեր արտադրանքի կայուն որակը: Մինչդեռ մեր կողմից արվում են տեխնիկական փոփոխություններ՝ հետագա զարգացմանն ավելի նպաստելու համար:

STEP - 2014-03-05 - 17068 - © Cont. pages 06393